ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 9
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ГЮМИЙСКАЯ ОСНОВНАЯ N 9 ШКОЛА
REPUBLIC OF ARMENIA SHIRAKI MARZ GYUMRI
N9 BASIC SCHOOL

ք Գյումրի, Հաղթանակի 40
☎ (0312) 5-51-47

c. Gyumri st. Haghtanak 40
☎ (0312) 5-51-47

<<25>> հոկտեմբերի 2024 թվական

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՄԱՆՅԱ ԳՐԻԳՈՐԻ ԱԹՈՅԱՆ» Ա/Ձ -ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար 2024 թվականի օգոստոսի 8-ին կնքվել է N 3 «ՇՄԳՑՀԴ-ԳՀԱՊՁԲ-24/1-3» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1.1 կետով սահմանված է՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Սակայն մատակարարի կողմից բազմաթիվ անգամներ եղել են պայմանագրային պարտավորությունների խախտումներ, ինչի արդյունքում գրավոր տեղեկացվել և զգուշացվել է պայամանգրի կողմին: Պայամանագրի կողմ հանդիսացող «Մանյա Գրիգորի Աթոյան» Ա/Ձ (ՀՎՀՀ՝ 49811276)-ն ապրանքները մատակարարել է ժամկետների խախտումներով ինչպես նաև սխալ հաշվարկային հաշիվներ դուրս գրելով, որոնց համար տեղեկացվել է և՛ բանավոր, և՛ գրավոր, իսկ 09.10.2024 թվականին ուղարկվել է պատվեր սակայն հաշիվ ապրանքագիրը դուրս է գրվել 11.10.2024 թվականին, իսկ ապրանքների փաստացի մատակարարումը եղել է 14.10.2024 թվականին ժամը 15:30-ին անհայտ անձի կողմից, որը չի ներկայացրել սանգրքույկ և անձը հաստատող փաստաթուղթ: Ճշտումներ անելու նպատակով զանգահարել ենք տվյալ Ա/Ձ-ին պատկանող հեռախոսահամարին, սակայն չեն պատասխանել զանգին, առաքիչ հանդիսացող անձը բոլոր հարցադրումներին պատասխանել է ոչ բարեկիրթ ձևով: Կարևորելով երեխաների անվտանգությունը և այն, որ խախտվել է պայմանագրով սահմանված

Scanned with ACE Scanner

մատակարարման ժամկետը, ապրանքները համապատասխան ստորաբաժանման կողմից չեն ընդունվել, ինչի արդյունքում էլ խաթարվել է դպրոցի բնականոն ընթացքը:

Համաձայն ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար ապրանքի մատակարարման N 3 «ՇՄԳ9ՀԴ-ԳՀԱՊՁԲ-24/1-3» պայմանագրի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

2.1.7.1 կետի՝ պայմանագիրը միակողմանի լուծարվել է, քանի որ վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը.

ա) մատակարարել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել մեզ համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք ապահովել տուժանքների, մասնավորապես՝ որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման վճարների փոխանցումը:

Արդյունքում «Մանյա Գրիգորի Աթոյան» Ա/Ձ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և համաձայն «Գնումների մասին« ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի գտնում եմ, որ «Մանյա Գրիգորի Աթոյան» Ա/Ձ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են բոլոր հիմքերը, քանի որ մասնակիցը սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, հետևաբար որոշում եմ՝ «Մանյա Գրիգորի Աթոյան» Ա/Ձ-ին ներառել տվյալ ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Ջ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Scanned with ACE Scanner